ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
Գործարար & Ներդրումային Բանկինգ

ARMSWISSBANK
Private & Investment Banking

# ՔԱՂՎԱԾՔ

## «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԹԻՎ 01-2015 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

2015 թվականի փետրվարի 13-ին, ժամը 11:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց, 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի բաժնետերեր Վարտան Սիրմակեսը (11670 ձայնի իրավունքով) և «Բելեգինգսմաչեփիջ Ջոնգո» ՍՊԸ-ն (2918 ձայնի իրավունքով), ի դեմս տնօրեն Փիթր Օստռեկի:

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 14588) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:

Ժողովի Նախագահ ընտրվեց Վ. Սիրմակեսը, իսկ ժողովի քարտուղար՝ Ա. Սելլեֆյանը:

### ՕՐԱԿԱՐԳ

1. Պարտատոմսերի թողարկման, դրանց տեղաբաշխման, մարման կարգի և պայմանների սահմանման մասին հարցը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի ընդհանուր ժողովը.

### ՈՐՈՇԵՑ

**Առաջին հարցով (զեկուցող՝ Ա.Սելլեֆյան)՝**

1. Թողարկել և տեղաբաշխել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ պարտատոմսեր.
   ա) երկու միլիոն ԱՄՆ դոլար ծավալով, երեք տարի շրջանառության ժամկետով, 7,5% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, արժեկտրոնի վճարման եռամսյակային պարբերականությամբ:
   Հաստատել սույն ենթակետով սահմանված «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման պայմանները և պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման պայմանները՝ համաձայն Հավելված 1-ի (կցվում է),
   բ) երեք միլիոն ԱՄՆ դոլար ծավալով, չորս տարի շրջանառության ժամկետով, 8% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, արժեկտրոնի վճարման եռամսյակային պարբերականությամբ:
   Հաստատել սույն ենթակետով սահմանված «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման պայմանները և պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման պայմանները՝ համաձայն Հավելված 2-ի (կցվում է),

գ) հինգ միլիոն ԱՄՆ դոլար ծավալով, հինգ տարի շրջանառության ժամկետով, 8,5% տարեկան արժեկտրոնային եկամտաբերությամբ, արժեկտրոնի վճարման եռամսյակային պարբերականությամբ:

Հաստատել սույն ենթակետով սահմանված «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման պայմանները և պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման պայմանները՝ համաձայն Հավելված 3-ի (կցվում է):

2. Հանձնարարել և լիազորել Բանկի Խորհրդին՝ անհրաժեշտության դեպքում մինչև ութ միլիոն ԱՄՆ դոլար ծավալով պարտատոմս թողարկելու, ինչպես նաև պարտատոմսերի թողարկման պայմանները և պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման պայմանները հաստատելու վերաբերյալ որոշում կայացնել:

Որոշումն ընդունվեց միաձայն:

Որոշումն ուժի մեջ է մտնում 2015թ. փետրվարի 13-ից:

Նիստին այլ հարցեր չքննարկվեցին:

Սույն արձանագրությունը կազմված է 13.02.2015թ.-ին, հայերեն և անգլերեն լեզուներով, երկու օրինակից, բաղկացած է 4 (չորս) էջից:

Բաժնետեր՝ _____ Վ. Սիրմակես

_____ Փ. Օստոեկ

Քարտուղար՝ _____ Ա. Սելլեֆյան

Քաղվածքն արված է 16.02.2015թ.-ին՝ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ Բաժնետերերի արտահերթ Ընդհանուր Ժողովի 13.02.2015թ. թիվ 01-2015 արձանագրության բնօրինակից:

Գործադիր տնօրեն՝ Գևորգ Մաչանյան

ARMSWISSBANK 02574955